ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐԱՆՏԻՆԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

(2010 թվականի մայիսի 21–ի արձանագրության խմբագրությամբ)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության (այսուհետ՝ Մաքսային միություն) անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով ձեւավորել Մաքսային միություն,

հիմնվելով «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25–ի համաձայնագրի վրա,

ընդունելով կարանտինային բուսասանիտարական պահանջների եւ միջոցառումների կիրառման ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման նպատակահարմարությունը,

հաշվի առնելով «Բույսերի կարանտինի եւ բույսերի պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիայի (1951 թվական, Հռոմ, 1997 թվականի խմբագրությամբ) (այսուհետ՝ Կոնվենցիա), «Առեւտրի տեխնիկական արգելքների մասին» համաձայնագրի, «Առեւտրի համաշխարհային կազմակերպության սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների կիրառման մասին» համաձայնագրի կանոններն ու սկզբունքները, որոնք ընդունվել են Մարաքեշում, 1994 թվականի ապրիլի 15–ի, Առեւտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքներով,

կարանտինային օբյեկտների եւ ներմուծումից ու տարածումից եւ դրանց պատճառած կորուստներից Մաքսային միության մաքսային տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով, ինչպես նաեւ ենթակարանտինային արտադրանքի նկատմամբ միջազգային առեւտրի խոչընդոտների վերացման նպատակով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ գործածվում են հետեւյալ հիմնական հասկացությունները՝

«կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ)»՝ Կողմ հանդիսացող պետությունների տարածքներում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող եւ կարանտինային օբյեկտների ազգային ցանկերում ներառված վնասակար օրգանիզմներ.

«կարանտինային բուսասանիտարական ստուգում (հսկողություն)»՝ բույսերի կարանտինի ոլորտում իրավասություններով օժտված՝ Կողմ հանդիսացող պետությունների ազգային մարմինների գործունեություն, որն ուղղված է կարանտինային օբյեկտների բացահայտմանը, կարանտինի մեջ գտնվող արտադրանքի կարանտինային բուսասանիտարական վիճակի հաստատմանը եւ Կողմ հանդիսացող պետությունների միջազգային պարտավորությունների եւ բույսերի կարանտինի ոլորտում իր պետության օրենսդրության իրականացմանը.

«կարանտինի մեջ գտնվող արտադրանք (կարանտինի մեջ գտնվող բեռներ, կարանտինի մեջ գտնվող նյութեր, կարանտինի մեջ գտնվող ապրանքներ)» (այսուհետ՝ «կարանտինի մեջ գտնվող արտադրանք»)՝ բույսեր, բուսական ծագում ունեցող արտադրանք, տարա, փաթեթավորում, բեռներ, հող, օրգանիզմներ կամ նյութեր, որոնք տեղափոխվում են Մաքսային միության մաքսային սահմանով եւ Մաքսային միության մաքսային տարածքով, որոնք կարող են լինել կարանտինային օբյեկտների կրողներ եւ (կամ) նպաստել դրանց տարածմանը, եւ որոնց նկատմամբ պետք է ձեռնարկել կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ.

«կարանտինի մեջ գտնվող արտադրանքի խմբաքանակ»՝ կարանտինում գտնվող արտադրանքի քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նպատակակետ մեկ ստացողի ուղարկելու համար.

Սույն Համաձայնագրով հատուկ չսահմանված հասկացությունները կիրառվում են Կոնվենցիայի կողմից հաստատված իմաստներով, կարանտինային բուսասանիտարական միջոցների միջազգային ստանդարտներով, Եվրասիական տնտեսական համայնքի եւ Մաքսային միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է կարանտինի մեջ գտնվող այն արտադրանքի վրա, որը ներառված է կարանտինի մեջ գտնվող արտադրանքի (կարանտինի մեջ գտնվող բեռների, կարանտինի մեջ գտնվող նյութերի, կարանտինի մեջ գտնվող ապրանքների) ցանկում, որը ներմուծման ժամանակ Մաքսային միության մաքսային սահմանի վրա եւ Մաքսային միության մաքսային տարածքում ենթակա է կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) (այսուհետ՝ կարանտինի մեջ գտնվող արտադրանքի ցանկ):

(2010 թվականի մայիսի 21–ի արձանագրության խմբագրությամբ)

Մաքսային միության մաքսային սահմանի վրա կարանտինային բուսասանիտարական ստուգումն (հսկողություն) իրականացվում է «Մաքսային միության մաքսային սահմանի վրա կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) իրականացման կարգի մասին» կանոնակարգի համաձայն:

Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական ստուգումն (հսկողություն) իրականացվում է «Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) իրականացման կարգի մասին» կանոնակարգի համաձայն:

Մաքսային միության մաքսային սահմանից կարանտինի մեջ գտնվող արտադրանքի արտահանման դեպքում կարանտինային բուսասանիտարական ստուգումն (հսկողությունը) իրականացվում է Կողմ հանդիսացող պետությունների՝ բույսերի կարանտինի ոլորտում միջազգային պարտավորությունների եւ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության համաձայն:

(պարբերությունն ավելացվել է 2010 թվականի մայիսի 21–ի արձանագրությամբ)

Հոդված 3

Կողմ հանդիսացող պետությունների ազգային մարմինների կողմից սույն Համաձայնագրի կիրարկման նպատակով լիազորություններ ստացած են համարվում Կողմ հանդիսացող պետությունների այն մարմինները, որոնք իրականացնում են կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) գործառույթները (այսուհետ՝ լիազորված մարմիններ):

Կողմերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման ու դրանում կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմներ) տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում եւ պատասխանատվություն են կրում բույսերի կարանտինի ոլորտում՝ Կողմ հանդիսացող պետությունների ստանձնած միջազգային պարտավորությունների ու իրենց պետության օրենսդրության պահպանման առումով:

Հոդված 4

1. Կողմերի լիազորված մարմինները բուսասանիտարական ստուգում (հսկողություն) են իրականացնում Մաքսային միության մաքսային սահմանով կարանտինի մեջ գտնվող արտադրանքի տեղափոխման դեպքում՝ Կողմ հանդիսացող պետությունների անցակետերում կամ այնպիսի վայրերում, որտեղ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության համաձայն սարքավորվում եւ տեղավորվում են բույսերի կարանտինի համար նախատեսված կետերը (բուսասանիտարական հսկիչ դիրքեր):

2. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող, կարանտինի տակ գտնվող արտադրանքը պետք է համապատասխանի Կողմ հանդիսացող այն պետության բուսասանիտարական պահանջներին, որի տարածքում է գտնվում կարանտինի մեջ գտնվող արտադրանքի նպատակակետը:

Կողմերը ապահովում են կարանտինի մեջ գտնվող՝ ներմուծվող արտադրանքի նկատմամբ ներկայացվող բուսասանիտարական պահանջների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության տեղադրումը Կողմերի լիազորված մարմինների պաշտոնական կայքերում (ինտերնետ–ռեսուրսներում), ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտի Տեղեկատվական համակարգում եւ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում:

Կարանտինի մեջ գտնվող արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակ, որը, կարանտինի մեջ գտնվող արտադրանքի ցանկի համապատասխան, պատկանում է կարանտինի մեջ գտնվող բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի խմբին, ներմուծվում է Մաքսային միության մաքսային տարածք արտահանման կամ վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրով, որը տրվում է Կողմ

հանդիսացող պետության համապատասխան մարմնի՝ արտահանողի (վերաարտահանողի) կողմից, Կոնվենցիայով սահմանված ձեւով:

(2–րդ կետը՝ 2010 թվականի մայիսի 21–ի արձանագրության խմբագրությամբ)

3. Կարանտինի մեջ գտնվող արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակ, որը համաձայն կարանտինի մեջ գտնվող արտադրանքի ցանկի պատկանում է բուսասանիտարական բարձր ռիսկայնության կարանտինի մեջ գտնվող արտադրանքի խմբին, որը տեղափոխվում է Կողմ հանդիսացող մի պետության տարածքից Կողմ հանդիսացող մյուս պետության տարածք, պետք է ուղեկցվեն ուղարկող Կողմի բուսասանիտարական հավաստագրով՝ Կոնվենցիայով սահմանված ձեւով:

(2010 թվականի մայիսի 21–ի արձանագրության խմբագրությամբ)

Կողմերը ճանաչում են Կողմ հանդիսացող պետությունների լիազորված մարմինների կողմից տրվող բուսասանիտարական հավաստագրերը:

Կող հանդիսացող պետությունների տարածքներում կարանտինի մեջ գտնվող արտադրանքի նպատակակետերում անցկացվող կարանտինային բուսասանիտարական ստուգումը (հսկողությունը) իրականացվում է սույն Համաձայնագրի 2–րդ հոդվածի համաձայն:

Հոդված 5

1. Կարանտինի մեջ գտնվող արտադրանքի ցանկը, «Մաքսային միության մաքսային սահմանի վրա կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) իրականացման կարգի մասին» կանոնակարգը, «Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) իրականացման կարգի մասին» կանոնակարգը հաստատվում են Մաքսային միության Հանձնաժողովի որոշմամբ (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Սույն հոդվածի 1–ին կետում նշված փաստաթղթերի վարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից, բույսերի կարանտինի ապահովման ոլորտում Կողմերի կողմից իրեն համապատասխան լիազորությունների տրամադրման ամսաթվից սկսած:

Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի վարում ասելով հասկանում ենք սույն հոդվածի առաջին կետում նշված Մաքսային միության

փաստաթղթերում սահմանված կարգով փոփոխությունների եւ լրացումների կատարումը, դրանց հետագա հաստատումը եւ Կողմերին այդ մասին ծանուցումը:

Սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերում փոփոխությունների եւ լրացումների կատարման մասին առաջարկությունները Հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվում սահմանված կարգով՝ Կողմերից ցանկացածի առաջարկությամբ:

(2010 թվականի մայիսի 21–ի արձանագրության խմբագրությամբ)

Հոդված 6

Կող հանդիսացող պետությունների լիազորված մարմինները՝

Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) հայտնաբերման եւ տարածման դեպքում, դրանց, ինչպես նաեւ կարանտինային բուսասանիտարական միջոցների մասին տեղեկատվություն ուղարկում են Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտի Տեղեկատվական համակարգ եւ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգ,

միմյանց ժամանակին տեղեկացնում են իրենց պետության տարածքում կարանտինային օբյեկտների (կարանտինային վնասակար օրգանիզմների) հայտնաբերման եւ տարածման դեպքերի մասին եւ իրենց կողմից ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցների ձեռնարկման մասին,

Կողմ հանդիսացող պետություններին ժամանակին տեղեկացնում են իրենց պետություններում ընդունված կարանտինային օբյեկտների ցանկերի մասին,

բույսերի կարանտինի պահպանման ոլորտում գիտական, մեթոդաբանական եւ տեխնիկական փոխադարձ օժանդակություն են ցուցաբերում,

յուրաքանչյուր տարի փոխանակում են նախորդ տարվա վիճակագրական տեղեկատվություն, որոնք վերաբերում են իրենց պետությունների տարածքներում կարանտինային օբյեկտների հայտնաբերմանն ու տարածմանը:

Հոդված 7

1. Կողմ հանդիսացող պետությունների լիազորված մարմինները, անհրաժեշտության դեպքում եւ փոխադարձ համաձայնությամբ՝

փոխանակում են տեղեկատվություն,

ուղարկում են մասնագետներին՝ Կողմ հանդիսացող պետություններից մեկի տարածքից Կողմ հանդիսացող մյուս պետության տարածք կարանտինի մեջ գտնվող արտադրանքի արտադրության (պատրաստման) վայրերի համատեղ հետազոտության անցկացման, տեսակավորման, վերամշակման, պահեստավորման եւ փաթեթավորման նպատակով,

համատեղ անց են կացնում կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) որոշակի տեսակներ, որոնք հաստատված են «Մաքսային միության մաքսային սահմանի վրա կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) իրականացման կարգի մասին» կանոնակարգով եւ «Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) իրականացման կարգի մասին» կանոնակարգով,

համագործակցում են կարանտինային բուսասանիտարական ստուգման (հսկողության) այլ հարցերում:

2. Կողմերը հոգում են սույն հոդվածի 1–ին կետի իրականացման հետ կապված ծախսերը՝ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ նախատեսված միջոցների սահմաններում, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում այլ կարգ չի սահմանվում:

Հոդված 8

Կողմերից յուրաքանչյուրը կարանտինային բուսասանիտարական միջոցներ մշակելու եւ ներմուծելու իրավունք ունի հետեւյալ դեպքերում՝

իրենց պետությունների տարածքներում կարանտինային բուսասանիտարական իրավիճակի վատթարացման դեպքում,

համապատասխան միջազգային կազմակերպություններից, Կողմերից եւ (կամ) երրորդ երկրներից ձեռնարկվող կարանտինային բուսասանիտարական միջոցների մասին տեղեկատվություն ստանալու դեպքում,

եթե կարանտինային բուսասանիտարական միջոցների կիրառման համապատասխան գիտական հիմնավորումը բավարար չէ կամ չի կարող ներկայացվել անհրաժեշտ ժամկետներում:

Հոդված 9

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցություններ ու բանակցություններ անցկացնելու վերաբերյալ Կողմերից մեկի կողմից մյուս Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման եղանակի վերաբերյալ Կողմերի միջեւ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Կողմերից ցանկացածը վեճը փոխանցում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6–ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11–ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից	Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից	Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)